ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

Ա4-121-2023թ
27.12.2023թ.

«ՖՈՏՈՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
/ՀՀ, ք. Երևան, Ռոստոմի 58, հեռ.՝ +37477556077/

Հարգելի տիկին ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2023 թվականի հուլիսի 17-ին հայտարարված խոշոր եղջերավոր կենդանու մսի ձեռքբերման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/23 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 90036001, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռոստոմի 58, հեռ.՝ +37477556077, էլեկտրոնային հասցե՝ ms.foton2014@mail.ru), որի հետ 25.08.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/23 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Այգու կողմից, նշյալ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, սահմանված կարգով՝ ծանուցմամբ՝ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին են ներկայացվել մատակարարման պատվերներ-հայտեր՝ սահմանված և հաստատված ձևաչափով, որոնց շրջնակներում «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն մատակակարարումները ի սկզբանե կատարել է պատշաճ ձևով, սակայն 01.12.2023թ-ին «Ֆոտոն» ՍՊԸ-ի տնօրեն Նելլի Պետրոսյանից ստացված ծանուցում-գրության համաձայն, վերջինս տեղեկացրել է, որ 2023 թվականի նոյեմբերի 24-ին թիվ 58229023 քրեական վարույթի շրջանակներում «Ֆոտոն» ՍՊ ընկերության գրասենյակում կատարվել է խուզարկություն, որի ընթացքում ի թիվս այլնի առգարվվել են նաև «Ֆոտոն» ՍՊ ընկերության կնիքը և հաշվապահական հաշվառման բոլոր փաստաթղթերը, որպեսզի պայմաններում ամբողջությամբ անհնար է դարձել պայնագրերով նախատեսված ապրանքների մատակարարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նշյալ օրվանից ի վեր «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել Այգու կողմից պատվեր-հայտով ներկայացված ապրանքները, իսկ Այգու կարիքների համար այդ ապրանքների ձեռքբերումն ունի կենսական նշանակություն, իսկ մատակարարումների ոչ պատշաճ իրականացումը կարող է հանգեցնել կենդանատեսակների հյուծվածության, ինչպես նաև՝ անկումների և ամբողջովին խաթարել Այգու գործունեության բնականոն ընթացքը, Այգու կենդանիների կերակրման առաջնահերթությամբ և հրատապությամբ պայմանավորված, խնդրում ենք Ձեզ ձեռնարկել միջոցներ սննդամթերքի մատակարարման գործառույթը պատշաճ իրականացնելու համար, մասնավորապես՝ խնդրում ենք հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին

ՀՀ, Երևան 0025,
Մյասնիկյան 20
+374 10 562 362
www.zoo.am
info@zoo.am

«Ֆոտոն» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/23 ծածկագրով պայմանագիրը չմատակարարված քանակությունների մասով միակողմանի լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից սահմանված կարգով Պայմանագիրը ստորագրելուց ներկայացվել են ներկայացվել են որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված բանկային երաշխիքների տեսքով, համապատասխանաբար. որակավորման ապահովում՝ 7,500,000.00 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, որը չմատակարարված քանակությունների մասով ստացվում է՝ 4,071,000.00 (չորս միլիոն յոթանասունմեկ հազար) ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովում՝ 5.000,000.00 (հինգ միլիոն) ՀՀ դրամի չափով, որը չմատակարարված քանակությունների մասով ստացվում է՝ 2,714,000.00 (երկու միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ, տեղեկացնում ենք, որ պետք է վճարվեն «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից:

Վերոնշյալի վերաբերյալ Այգին դիմել է բանկային երաշխիքները թողարկած՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ վճարումների չկատարման դեպքում Այգին վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ